

**ԳՈՌ ԹՈՎՄԱՍՅԱՆ**

ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասպիրանտ

**ՓՈՔՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԵՐՊԱՓՈԽՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Հողվածում փորձ է արվել Հայաստանի օրինակով վերլուծելու փոքր պետությունների միջազգային ռազմական համագործակցության առանձնահատկությունները, այն մարտահրավերները, որոնց փոքր պետությունները բախվում են առկա ռեսուրսների սահմանափակության հետևանքով: Անվտանգային միջավայրի փոխակերպման համատեքստում քննարկվել են ռազմական համագործակցության, դաշինքային քաղաքականության հնարավորությունները: Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության առանձնահատկություններից ելնելով՝ վերլուծել ենք Հայաստանի շուրջը ձևավորված միջավայրից բխող սպառնալիքներին հակազդելու հարցում միջազգային ռազմական համագործակցության դերի կարևորությունը:

*Հիմնարարը՝ փոքր պետություն, միջազգային ռազմական համագործակցություն, անվտանգային միջավայր, պաշտպանական բարեփոխումներ, պաշտպանական քաղաքականություն:*

«Տեսե՛ք, թե ինչ է կատարվում մեր երկրի շուրջը՝ տարածաշրջանում և անընդհատ փոքրացող աշխարհում ընդհանրապես: Հայաստանը նավակի պես կրկին հայտնվել է մեծ պեկոծությունների ուղիղ կենտրոնում: Պատերազմ հենց մեր հարևանությամբ, փակ սահմաններ, արտաքին հաղորդակցման խնդիրներ, բարդացող տարածաշրջանային հարաբերություններ, գերտերությունների շահերի բախում. սա է այսօրվա իրականության շրջանակը Հայաստանի համար: Եվ այս պայմաններում է, որ մենք ոչ թե գոյատևան, այլ զարգացման խնդիրներ պիտի լուծենք»<sup>1</sup>: Փոքր պետություններին բնորոշ այս իրողության խորքային պատճառները հասկանալու համար անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ ենք հասկանում մենք փոքր պետություն ասելով, և ինչպիսի ընդհանրական խնդիրների են բախվում փոքր պետություններն իրենց պաշտպանական քաղաքականության կերտման և դրանից բխող՝ միջազգային ռազմական համագործակցության առաջնահերթությունների որոշակիացման գործում:

հիմքում դնում են պետության աշխարհագրական չափերը, բնակչության թիվը և տնտեսական զարգացման մակարդակը, որոշ դեպքերում էլ այս բնութագրիչները օգտագործվում են միասին՝ ընդհանուր ընդունելի դասակարգման ձևի հասնելու համար<sup>2</sup>: Չնայած այս մոտեցումը որոշակի առումներով արդյունավետ է, այնուամենայնիվ առկա են մի շարք խնդիրներ: Ակնհայտ է, որ փոքր բնակչությամբ և տնտեսական զարգացման ցածր մակարդակով պետությունները անհրաժեշտ աշխատուժի պակաս պետք է ունենան, և այս առումով արդյունավետ կառավարման հարցում հիմնախնդիրներ են ի հայտ գալիս, բայց մյուս կողմից արդի աշխարհում ընթացող տեխնոլոգիական և գիտական անախադեպ առաջընթացը հնարավոր է դարձնում այս բացի լրացումը: Մասնավորապես առաջնահերթ է դառնում բնակչության ոչ թե քանակական գործոնը, այլ՝ որակականը: Ընդ որում, նշյալը հավասարապես վերաբերում է պետության ռազմական հզորությանը, որը չափվում է ոչ այնքան և ոչ միայն զինված ուժերի բազմաքանակությամբ, արդիական սպառազինությունների առկայությամբ, որքան սպառազինությունների՝ ըստ մարտական առաջադրանքի և առանձնահատկության տեղաբաշխվածությամբ, հագեցվածությամբ և դրանց կիրառման ունակությունների որակով: Բացի այդ, կարևոր է նշել նաև, որ պետությունների դասակարգումը մեծապես կախված է նրանից, թե տվյալ հետազոտողը վերլուծության ինչ մակարդակ է ընտրում պետության մեծ կամ փոքր լինելը սահմանելու համար: Պետությունը

www.journal.lawinstitute.am

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կարող է որակավորվել որպես մեծ, երբ այն դիտարկվում է տարածաշրջանային մակարդակում, այն դեպքում, երբ նույն պետությունը գործալ մակարդակում կարող է դասակարգվել որպես փոքր: Էական է նաև հետազոտության ոլորտը, որի շրջանակներում դիտարկվում է պետությունը, քանի որ տնտեսական առումով միջազգային հարաբերություններում լուրջ դերակատարում ունենալուց չի բխում տվյալ պետության համաչափ ռազմական հզորությունը: Հետևաբար, պետությունների չափերը սահմանելու համար ընտրված ֆիզիկական բնութագրիչների միախուսումը, որն ընկած է կոնստրուկտիվիստական մոտեցման հիմքում, փոքր պետությունների ռազմական համագործակցության առանձնահատկությունները վերլուծելու համար բավարար հիմքեր չի տալիս:

Փոքր պետությունների սահմանման հարցում մեկ այլ մոտեցում է առաջ քաշում Անետ Բեյքեր Ֆոքսը: Այդ մոտեցման հիմքում ընկած է պետության վարքագծային մոդելը: Նա, մասնավորապես, նշում է. «Մենք փոքր կարող ենք համարել այն պետություններին, որոնց դեկլարները գիտակցում են, որ իրենց պետության քաղաքական կշիռը սահմանափակվում է լոկալ մակարդակում, որ իրենց անվտանգության ապահովման զգալի մասը կախված է արտաքին ուժերից և որ իրենց պետությունների մասնավոր շահերը կարող են անտեսվել մեծ պետությունների կողմից»<sup>3</sup>: Նմանատիպ սահմանում է առաջարկում նաև Ռոբերտ Ռոտշտեյնը. «Փոքր է համարվում այն պետությունը, որը գիտակցում է, որ չի կարող իր հնարավորությունների սահմանում ապահովել իր անվտանգությունը և այն ապահովելու համար պետք է հիմնարար կերպով օգտվի այլ պետությունների, ինստիտուտների, գործընթացների ընձեռած հնարավորություններից»<sup>4</sup>: Փաստելով, որ վերոնշյալ սահմանումներում մեծապես կարևորվում են պետության՝ անվտանգության ապահովման կարողությունը և պաշտպանության խնդիրները, նշենք, որ մասնագիտական գրականության մեջ որոշ հետազոտողներ այս համատեքտում առաջ են քաշում նաև տարբեր տարածաշրջանային և գլոբալ գործընթացների վրա ազդեցություն գործելու՝ պետության հնարավորությունը: Այս իմաստով, սույն հոդվածում փոքր պետության ռազմական համագործակցության առանձնահատկությունները ՀՀ օրինակով լուսաբանելու համար մենք կհետևենք մինչև օրս մասնագիտական գրականության մեջ գերիշխող մոտեցմանը՝ փոքր պետության սահմանման համար ելակետային համարելով պետության ռազմական ներուժն ու հզորությունը: Մինչ սահմանմանը անցնելը հստակեցնենք, թե ինչ ենք հասկանում մենք ռազմական ներուժ և հզորություն ասելով: Պետության ռազ-

մական ներուժը ձևավորվում է տնտեսական, գիտական, բարոյահոգեբանական, սոցիալական և տեղեկատվական հզորության հանրագումարից: Այսինքն, պետության ռազմական ներուժը հանդիսանում է տվյալ պահին պետության կողմից հատկացված մաքսիմալ հնարավոր ռեսուրսների և միջոցների ամբողջություն<sup>5</sup>: Իսկ ռազմական հզորությունը անմիջականորեն բխում է պետության՝ ռազմական ներուժը հզորության վերածելու հնարավորություններից: Հասկանալի է, որ ռազմական ներուժի վերածումը հզորության չպետք է խանգարի այլ ոլորտների բնականոն ընթացքին: Հետևաբար, ելնելով սրանից, մենք, փոքր պետություն ասելով, հասկանում ենք սահմանափակ ռեսուրսներով պետություն, որն արդի աշխարհում իր ռազմական անվտանգության ապահովման խնդիրը միայնակ լուծելու համար չունի անհրաժեշտ ռազմական հզորություն և այս առումով մեծապես կարևորում է ռազմական համագործակցությունը տարբեր անվտանգության համակարգերի և ուժեղ պետությունների հետ:

Անկախ ստեղծման բնույթից՝ փոքր պետությունները լուրջ խնդիրների առաջ են կանգնում մասնավորապես մարդկային և բնական ռեսուրսների՝ սահմանափակ լինելու հետևանքով: Ռեսուրսների պակասի պատճառով վերջիններս զգալիորեն կախված են լինում իրենց արտաքին քաղաքական միջավայրից և հետևաբար շատ զգայուն են դառնում միջազգային համակարգի փոփոխությունների նկատմամբ<sup>6</sup>: Քանի որ փոքր պետությունները ընդունակ չեն ազդելու արտաքին քաղաքական միջավայրի վրա, դրանք հիմնականում հարմարեցնում են իրենց քաղաքականությունը այդ միջավայրին: Հետևաբար հարց է առաջանում: Կարելի է արդյոք ասել, որ փոքր պետությունների արտաքին քաղաքականությունը նրանց ներքին քաղաքականության տրամաբանական շարունակությունն է:

Փոքր պետություններին վերաբերող մասնագիտական գրականության մեջ այս հարցի առնչությամբ մոտեցումները ընդհանուր առմամբ հանգում են նրան, որ փոքր պետության պարագայում արտաքին քաղաքականության ձևավորումը հիմնականում իր վրա կրում է արտաքին միջավայրից եկող ազդակների ազդեցությունը: Ինչպես նշում է միջազգային հարաբերությունների հայտնի տեսաբան Ջ. Ռոզենաուն. «Փոքր պետությունների համար արտաքին միջավայրը շատ ավելի կարևոր փոփոխական է, քան մեծ պետությունների համար, և միջազգային որևէ համակարգում գործելուց առաջ դրանք պետք է նախ և առաջ նույնականացնեն համակարգի այդ տիպը»<sup>7</sup>: Այս առումով Ջ. Սնայդերը և Ռ. Շուելլերը գտնում են, որ եթե մեծ պետություններն իրենց արտաքին ռազմավարությունը կառուցում են ներքին

հանգամանքներով պայմանավորված, ապա փոքր պետությունները ստիպված են արձագանքելու միջազգային հարաբերություններում ընթացող մրցակցության հետևանքով առաջացած զարգացումներին<sup>8</sup>։ Մասնավորապես Ռ. Շուելլերը տեսակետ է հայտնում, որ փոքր պետությունների արտաքին քաղաքականության առանձնահատկությունները հասկանալու համար ներպետական մակարդակում խնդիրների վերլուծությունը արդյունավետ չի կարող լինել<sup>9</sup>։ Քանի որ փոքր պետությունները ավելի շատ են մտահոգված գոյատևման խնդիրներով, միջազգային համակարգի ուսումնասիրությունը շատ ավելի կարևոր է դառնում վերջիններիս արտաքին քաղաքական ընտրությունը հասկանալու համար։ Որովհետև փոքր պետությունները հիմնականում բախվում են արտաքին միջավայրից բխող սպառնալիքների հետ, և հետևաբար արտաքին քաղաքականությունը գլխավորապես կենտրոնանում է այդ սպառնալիքները չեզոքացնելու ուղղությամբ։ Այս համատեքստում ներքին գործոններով և պահանջմունքներով պայմանավորված արտաքին քաղաքական կուրսի իրականացումը հասկանալի պատճառներով դառնում է անհնարին։ Այսինքն, եթե փոքր պետությունը օբյեկտիվ պատճառներով հնարավորություն չունի էական ազդեցություն գործելու արտաքին միջավայրի ձևավորման վրա, պետք է գլխավորապես հանդես գա այդ նույն միջավայրից եկող սպառնալիքներին հակազդելու դիրքերից, ինչով էլ հենց պայմանավորվում է փոքր պետությունների արտաքին քաղաքականության և մասնավորապես ռազմական համագործակցության իրականացման առանձնահատկությունը։

Անվտանգային հետազոտությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հետազոտողների մեծ մասի կարծիքով 21-րդ դարի աշխարհը որակապես փոխվել է՝ դառնալով առավել բարդ, անորոշ ու դինամիկ։ Բարդության և անկանխատեսելիության պատճառն այն է, որ նոր բազմակենտրոն միջավայրը իրականում լիովին չի վերացրել պետականակենտրոն աշխարհակարգը։ Սրանց միախառնումն է, որ աշխարհը դարձրել է տուրբուլենտ և երկատված։ Միջազգային անվտանգության հիմնահարցը դարձել է բազմամակարդակ, ավանդական անվտանգային գործոններն ու ոչ ավանդականը դարձել են փոխկապված։ Ազգային անվտանգություն հասկացությունը ժամանակի ընթացքում բովանդակային առումով զգալի փոփոխությունների է ենթարկվել։ Սառը պատերազմի ժամանակաշրջանում այս հասկացությունը ընկալվում էր որպես ռազմական կատեգորիա, քանի որ ազգային անվտանգություն ասելով՝ նախ և առաջ հասկանում էին ռազմական անվտանգություն։ Երկբևեռ համակարգի փլուզումից

հետո վերանայման ենթարկվեց նաև այս հասկացությունը, քանի որ ռազմական բնույթի սպառնալիքների հավանականության նվազումը հետզհետե ակնհայտ դարձրեց, որ նոր աշխարհակարգի պայմաններում ի հայտ են գալիս իրենց բնույթով անհամաչափ այլ սպառնալիքներ։

Անվտանգության հասկացությունը ամենակարևոր խնդիրներից մեկն է, որին պետությունները հիմնականում, և փոքր պետությունները հատկապես բախվում են։ Խոցելիության, ռազմական հարաբերական թույլ ուժի, ինչպես նաև ռեսուրսների պակասի պատճառով, գրեթե սկսած իրենց ձևավորումից, փոքր պետությունները մշտապես բախվում են այն հարցին, թե ինչպես գտնել անվտանգության երաշխիքներ իրենց գոյության համար։ Օրինակ, ռեալիստների և նեոռեալիստների կարծիքով, պետությունը բացառապես հանդես է գալիս որպես իր սեփական շահերը բավարարող մեխանիզմ։ Առավել բարձր մակարդակի անվտանգության հասնելը գրեթե յուրաքանչյուր պետության միակ նպատակն է<sup>10</sup>։

Իրենց անվտանգային շահերը իրացնելու հարցում պետությունների ջանքերը արտացոլված են լինում անվտանգային քաղաքականության մեջ, որն անբաժանելի է արտաքին քաղաքականությունից։ Ինչպես նշել ենք վերևում, չպետք է մոռանալ, որ փոքր պետությունների դեպքում անվտանգային քաղաքականությունը ձևավորվում է գլխավորապես արտաքին միջավայրից բխող հիմնական միտումների հաշվառմամբ։ Ակնհայտ է, որ երբեմն փոքր պետությունների անվտանգությունը մեծապես կախված է լինում տարածաշրջանային և միջազգային գերտերություններից և հատկապես այն բանից, թե աշխարհագրական առումով ինչպիսի տեղադիրքում է փոքր պետությունը գերտերության նկատմամբ։ Ահա այստեղ էլ ի հայտ է գալիս դաշինքային քաղաքականություն վարելու անհրաժեշտությունը, որը փոքր պետությունների պարագայում առաջ է բերում որոշակի բարդություններ։

Իրենց անվտանգությունը ապահովելու համար որոշակի դաշինքներին միանալու կամ գերտերության աջակցությունից օգտվելու դեպքում փոքր պետությունները համապատասխանաբար որոշակի չափով կորցնում են իրենց ինքնուրույնությունը։ Այնուամենայնիվ, անվտանգության երաշխիքներ ունենալու կարևորությունը փոքր պետություններին այլ ելք չի թողնում։

Մասնագիտական գրականության մեջ տեսակետ կա, որ փոքր պետությունները միանում են դաշինքներին, քանի որ վերջիններս նրանց համար դառնում են ապաստան մեծ պետություններից պաշտպանվելու հարցում։ Սրա արդյունքում էլ փոքր պետությունները որոշակի առումով կորցնում են

ինքնուրույն գործելու հնարավորությունը, և ակամայից առաջանում է խնդիր ինքնուրույնության կորստի և անվտանգության երաշխիքների միջև հավասարակշռության հասնելու հարցում<sup>11</sup>: Մյուս կողմից հարց է առաջանում՝ ինչքանով են փոքր պետությունները ինքնուրույն առհասարակ:

Այնուամենայնիվ, տեղայնացնելով Հայաստանի օրինակի վրա, պետք է նշել, որ մեր տարածաշրջանում և առհասարակ Հայաստանի Հանրապետության համար անվտանգության սպառնալիքները շարունակում են մնալ սիմետրիկ անվտանգության առաջնային մակարդակում: Որոշ փոքր պետությունների նման Հայաստանի Հանրապետության համար ռազական անվտանգության միջավայրը իրավամբ կարելի է բնորոշել որպես ռազմականացված, ինչն առանձնահատուկ կարևորություն է հաղորդում անվտանգային-պաշտպանական քաղաքականության, պաշտպանական դիվանագիտության կերտմանն ու դրանցից բխող միջազգային երկկողմ ու բազմակողմ համագործակցության զարգացմանը: Հոդվածի սկզբում մեջբերված ՀՀ նախագահի խոսքը փաստում է, որ Հայաստանը մեր քաղաքական էլիտայի կողմից ընկալվում է որպես փոքր պետություն: Հետևաբար այն կրում է նույն այն բնորոշիչները, որ հատուկ են փոքր պետություններին: Ուստի, անվտանգային միջավայրի փոխակերպման իրողությունը հաշվի առնելով՝ գտնում ենք, որ ՀՀ անվտանգային միջավայրը պետք է դիտարկվի երկմակարդակ: Առաջին մակարդակում սիմետրիկ սպառնալիքներն են՝ ավանդաբար պետություններից և նրանց վարած քաղաքականությունից բխող, որոնց այսօր բախվում է ՀՀ-ն Հարավկովկասյան

տարածաշրջանում<sup>12</sup>: Սա մասնավորապես վերաբերում է Ադրբեջանին, որն անմիջական ռազմական սպառնալիք է ստեղծում Հայաստանի Հանրապետության համար՝ դրանով ազդելով պաշտպանական քաղաքականության վրա: Իսկ երկրորդ մակարդակում սիմետրիկ սպառնալիքներն են՝ ահաբեկչություն, կազմակերպված հանցավորություն, որոնք բխում են այլ դերակատարների գործողություններից: Ասիմետրիկ սպառնալիքները, մեր կարծիքով, կարճաժամկետ հեռանկարում ՀՀ համար առաջնային լինել չեն կարող: Հետևաբար միջազգային ռազմական համագործակցության իրականացումը ՀԱՊԿ-ի, ՆԱՏՕ-ի հետ բազմակողմ ձևաչափով և ՀՀ-ՌԴ, ՀՀ-ԱՄՆ, ՀՀ-Հունաստան երկկողմ համագործակցության ջանքերը մեծապես պետք է ուղղված լինեն հենց համաչափ ռազմական սպառնալիքները չեզոքացնելու համար անհրաժեշտ ռազմական անվտանգության համակարգը կատարելագործելուն՝ զիտականորեն հիմնավորված պաշտպանական բարեփոխումներ իրականացնելով: Այս համատեքստում, կարծում ենք, նպատակահարմար է ներդնել ռազմավարական ռիսկերի գնահատման և կառավարման հայեցակարգ՝ տարեկան վերանայման սկզբունքով: 21-րդ դարի արագ փոփոխվող անվտանգության միջավայրից բխող սպառնալիքների, ռիսկերի և վտանգների կանխատեսումը թեպետ շատ բարդ հիմնահարց է, այնուամենայնիվ մոտավոր պատկերացումների առկայությունն իսկ կանխում է անկանխատեսելիության հետևանքները:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի ելույթը ԱՄՆ-ում ՀՀ դեսպանության, ՍԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության և ամերիկահայ առաջատար կազմակերպությունների կողմից կազմակերպված համընդհանուր ընդունելությանը [www.president.am/hy/statements-and-messages/item/2008/09/24/news-18/](http://www.president.am/hy/statements-and-messages/item/2008/09/24/news-18/)

<sup>2</sup> Տե՛ս David Vital, *The Inequality of States: A Study of the Small Power in International Relations*. (Oxford: Clarendon Press, 1967), pp. 7-9 and 52-53.

<sup>3</sup> Annette Baker Fox, "The Small States in the International System, 1919-1969," *International Journal* 24, no. 4 (1969), pp. 751-752.

<sup>4</sup> Տե՛ս Miriam Fendius Elman, *The Foreign Policies of Small States: Challenging Neorealism in Its Own Backyard*, *British Journal of Political Science*, Vol. 25, No. 2 (Apr., 1995), p. 174.

<sup>5</sup> Տե՛ս Шаваев А. Х. Военная мощь государства и ее взаимосвязь с политикой, *Военная мысль*, 3 март 2010, с. 58-72

<sup>6</sup> Samo Kropivnik and P. Jesovnik. "Small Countries in the Global Economy: Slovenia, an Exception or the Rule?" *Journal of International Relations* 2, no. 1-4 (1995), p. 67.

<sup>7</sup> Miriam Fendius Elman, *The Foreign Policies of Small States: Challenging Neorealism in Its Own Backyard*, *British Journal of Political Science*, Vol. 25, No. 2 (Apr., 1995), p. 179.

<sup>8</sup> Jack Snyder, *Myths of Empire: Domestic Politics and International Ambition* (Ithaca, N.Y.: Cornell University Press, 1991), pp. 317-318.

<sup>9</sup> Տե՛ս Miriam Fendius Elman , նշվ. աշխ. էջ 177:

<sup>10</sup> St'u Hans Morgenthau, Politics Among Nations: The Struggle for Power and Peace (New York: McGraw-Hill, 1993), pp. 3-17.  
<sup>11</sup> St'u Erich Reiter and Heinz Gartner, Small States and Alliances, Springer-Verlag Berlin Heidelberg 2001  
<sup>12</sup> St'u ՀՀ նախագահի 2007թ. դեկտեմբերի 25-ի ՆՀ-308-Ն հրամանագիրը ՀՀ «Ուսումնական դոկտրինը» հաստատելու մասին, <http://www.arlis.am>

*ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ*

1. ՀՀ նախագահի 2007թ. դեկտեմբերի 25-ի ՆՀ-308-Ն հրամանագիրը ՀՀ «Ուսումնական դոկտրինը» հաստատելու մասին, <http://www.arlis.am>  
 2. David Vital, The Inequality of States: A Study of the Small Power in International Relations. (Oxford: Clarendon Press, 1967)  
 3. Annette Baker Fox, “The Small States in the International System, 1919 –1969,” International Journal 24, no. 4, 1969  
 4. Miriam Fendius Elman, The Foreign Policies of Small States: Challenging Neorealism in Its Own Backyard, British Journal of Political Science, Vol. 25, No. 2 (Apr., 1995), <http://maihold.org/mediapool/113/1132142/data/Fendius.pdf>  
 5. А. Х. Шаваев, Военная мощь государства и ее взаимосвязь с политикой, Военная мысль, 3 март 2010, [www.avnr.ru](http://www.avnr.ru)  
 6. Samo Kropivnik and P. Jesovnik. “Small Countries in the Global Economy: Slovenia, an Exception or the Rule?” Journal of International Relations 2, no. 1-4 (1995)  
 7. Jack Snyder, Myths of Empire: Domestic Politics and International Ambition (Ithaca, N.Y.: Cornell University Press, 1991)  
 8. Hans Morgenthau, Politics Among Nations: The Struggle for Power and Peace (New York: McGraw-Hill, 1993),  
 9. Erich Reiter and Heinz Gartner, Small States and Alliances, Springer-Verlag Berlin Heidelberg 2001

Гор Товмасян  
Аспирант кафедры международных отношений и дипломатии ЕГУ

РЕЗЮМЕ

*Особенности внешнего военного сотрудничества малых государств в контексте трансформации среды безопасности*

Статья посвящена анализу основных вызовов, ограничений и возможностей внешней военной политики малых государств на примере Армении. Быстро меняющаяся среда безопасности бросает новые вызовы маленьким и слабым государствам. В случае Армении, основные угрозы исходят от нестабильной региональной атмосферы на Южном Кавказе, и в особенности от замороженного Карабахского конфликта. Для обеспечения военной безопасности Армении, предпочтение отдается интеграционным процессам в виде членства в стратегический союз, а также двухстороннему военному сотрудничеству. Очевидно, что международное сотрудничество имеет ключевое значение для широкомасштабных военных реформ.

**Ключевые слова:** малое государство, международное военное сотрудничество, безопасная среда, оборонные реформы, оборонная политика

Gor Tovmasyan  
Yerevan State University, Chair of International Relations and Diplomacy, Postgraduate student

SUMMARY

*The peculiarities of small state’ external military cooperation in the transforming security environment*

The article is dedicated to the analysis of underlying challenges, constraints and opportunities of small states’ external military policy, with a special focus on Armenia. The rapidly changing security environment has posed acute security challenges to small and fragile states, compounded by emergence of asymmetric military threats. The case of Armenia is quite indicative of the bigger picture. The core security facing the countries stem chiefly from mounting turbulence prevalent in the South Caucasus, and more precisely frozen Nagorno-Karabakh conflict. It is argued, integration in the form of the membership in an alliance, complemented with bilateral multivector partnerships are indispensable to enhancing Armenia’s military security. The external military cooperation has to stimulate large-scale military reforms, designed to alleviate the shortcomings of resource scarcity.

**Keywords:** small state, international military cooperation, security environment, defense reforms, defense policy